

ուեակի բացատրութիւնը:

Երդարանի մէջ կան մեր կարծիքով աւելի յաջող խմբագրութիւններ։ Բայց դա ճաշակի խնդիր է. օրինակ արժ։ Մեսրով վարդապետը «Երարատի» մէջ տպուած մի մատենախօսութեան մէջ ամենից յաջողներից է համարում «Հով արեք սարեր ջան» և «Կապուա քուռակ հեծել եմ»։ մէկ ուրիշն էլ կարող է ուրիշ երդ աւելի յաջող համարել։ մի երրորդն էլ գուցէ և ոչ մէկը։ Միայն այս ասենք, որ այդ երդերի իմաստը հասկանալու համար պէտք է առանձին առանձին քառետակների իմաստը լաւ ըմբռնել։ թէ չէ տների ներքին կապակցութիւնը մութը կը մնայ։

Այս տեսակետով գատելով՝ կարծում ենք, որ մենք ժողովրդական երդարան այսպէս չենք կազմել, ինչպէս ցարդ արել են ուրիշները։ Յաջող թէ անյաջող, բայց մենք խմբագրել ենք երդերը և խմբագրել վարիանտների բաղդատութեան ծանր աշխատանքը կրելուց յետոյ։

Մ. Ս. Ա. Ա. Ա. Ա. Ա.

## Ե.

### ԿԱՐԱԳ.

Ագարակատերերը, գիւղացիները և առհասարակ ամեն մի կովատէր կովերից ստացած կաթից կարող են տարբեր եղաւնակներով օգտուել։ Եթէ ագարակը կամ գիւղը քաղաքին կամ պանիր ու կարագ պատրաստելու գործարանին մօտ է դանըւում, կաթը կարող է ծախուել բայց եթէ այդպիսի յարմարութիւններ չկան, անասնատերերն ոկտում են պատրաստել կարագ, պանիր, մածուն և այլն։ Տեղանում ամենից աւելի ձեռնուու է կաթից կարագ պատրաստելն այն պատճառով, որ կովի կարագը շուկաներում միշտ լաւ գնով և օգուտով է ծախւում։ կարագ պատրաստելը միշտ աւելի շահաւետ է մեր կովատէրերի համար։

Հարելու օդնութեամբ սերից կամ կաթից պինդ գրութեամբ զատուած կաթնային ճարպը, որի հետ խառն են լինում մի քանի այլ լրացուցիչ նիւթեր, ինչպէս օրինակ ջուր, աղ և այլն։ կոչում է կարագ։ Հարելու նպատակն է կաթի անջատուած ճարպային դնտակիկները միացնել-ի մի ամփուրէ։ Ճարպային այդ դնտակիկները կաթի մէջ կաթիլահնեղուկ վիճակի մէջ են դառնում նոյն իսկ սենեակից շաժ բարեխառնութեան մէջ։ Կաթի այդ ճարպային դնտակիկները միացնելու համար անհրաժեշտ է նաև և առաջ հեղուկ ճարպային դնտակիկները պինդ վիճակի մէջ դնել, սառչելուց յետոյ թանձրացած ճարպի տռաննձին դնտակիկները միացնել։ Այս նպատակին կարելի է հասնել հարելով։

Կարագ կարելի է պատրաստել թարմ սերից, կաթից, և թթուած սերից։ Լա։ տեսակ կարագ կարելի է ստանալ թարմ սերից, թթուած սերից սովորաբար հասարակ տեսակի կարագ է ստացւած։ բայց եթէ մէկը շատ կովեր չունի և ուզում է նոյնպէս թարմ սերից կարագ պատրաստել, կամ պէտք է ամէն օր իւր հարեւաններից կաթ փոխ առնի (խափ անէ) և կամ փոքրիկ խոնցիներ շինել տայ։ \*) Բոլորովին ընտիր և համեղ կարագ ստանալու համար սերը պէտք է լցնել մի ամանի մէջ ու դնել մի մաքուր, ոչ դարշահնու, զով տեղ և քսանըցոր ժամից յետոյ հարել եթէ սրանից աւելի մնայ, կթթուի, իսկ թթուած սերից, ինչպէս վերևն էլ ասացինք, աւելի միջակ և մի տեսակ համ ունեցող կարագ կստացուի։ Բայց եթէ թարմ, չթթուած սերից կարագ ստանալու մի առանձին կարեւորութիւն չկայ, այն ժամանակ կովատէրերի համար աւելի ձեռնտու է ոչ այնքան թարմ սերից կարագ պատրաստելը, որքան թթուած (հում, արածան)։ Թթուած սերից կարագ պատրաստելը, այն առաւելութիւնն ունի, որ սերը վերցնելուց յետոյ տակը կմնայ թթու կաթ, որից շատ տեղեւում հեշտութեամբ պատրաստում են ճիլակ պանիր, իսկ Ռուսաստանում՝ լոռ։ բայց գրանից նա կարող է երեք չորս օր և դեռ աւելի երկար ժամանուկ անխաս փուռած մնալ և սովորաբար քիչ թթուած սերից աւելի շատ կարագ է ստացւած, քան թարմ սերից։ Այս կերպ՝ միայն առանձին խնամքով պատրաստած կարագը շատ քիչ է տարբերում

\* Ներկայում մինչեւ 12 դրուանիայ սերի համար եւս, որից մօտերապէս  $2\frac{1}{2}$  գրլ. կարագ կացանի, առանձին խնոցիներ են պատասխում։

թարմ սերից պատրաստած կարագից: Ներկայումս շատ տեղեք կարագ պատրաստում են ուղղակի երես չքաշած թարմ կաթից: Այս կերպ աւելի լաւ կարագ կսառացուի, միայն աւելի ջանը և աշխատութիւն է պահանջվում, քան միւս եղանակներով՝ թարմ կամ թթուած սերից պատրաստելիս: Այդ պատճառով էլ շատ չէ տարածւում և գործադրւում: Թթուած կաթից էլ կարելի է կարագ դուրս բերել, բայց դարձեալ ժամանակի կորուստ է, մանաւանդ որ մնացած թանը անյարմար կհամարուի պանրագործութեան և միայն իրը կեր անասուններին կարելի է տալ:

Լաւ կարագ ստանալու գլխաւոր պայմանները. Լաւ կարագ ստանալու գլխաւոր պայմանները հետևեալներն են.

1) Առաջ կարից սեր քաշելը. Լաւ կարագ ստանալու համար հարկաւոր է, որ սերը առողջ կաթից երեսից քաշած լինի: Նատ անդամ կաթից հիւանդութեան, ամանների անմարզութեան և այլ պատճառներով խնոցին երկար ժամանակ հարելուց յետոյ ճարագային գնտակիկները չեն հաւաքւում և միաւնում:

2) Սերի տաքարեան աստիճանը. Սերի կամ կաթից տաքութեան աստիճանից կախումն ունի ինչպէս հարելու տեղողութիւնը, նոյնպէս և կարագի քանակութիւնը և յատկութիւնը: Ճարագային գնտակիկները հեղուկ դրութիւնից կանոնաւոր կերպով պնդանում են որոշ ջերմութեան մէջ: Կարագ հարելու համար սերի միջին բարեխառնութիւնը (ձմեռը պէտք է լինի  $10-120$  Ռ., իսկ ամբանը՝  $8-10^{\circ}$  Ռ.): Զթթուած սերն աւելի պահառ տաքութեան մէջ պէտք է հարել, քան թթուածը: \*) Պէտք է աչքի առաջ ունենալ, որ հարելու ժամանակ սերի տաքութիւնն աւելանում է մի-երկու աստիճանով: Սերի տաքութեան չափը կարող է փոփոխուել երկրի, հետևապէս և խոտի յատկութեան, կերի չորութեան, անասունների տեսակի, կերի բաղադրութեան, խմած ջրի և այլ պատճառներով: Այսպէս օրինակ, չոր ծղոտից կամ դարմանից բաղկացած կերը աւելի պնդացնում, կոշտացնում է կարագը, այս պատճառով հարելիս սերը բարձր աստիճանի տաքութիւն պէտք է ունենայ. ընդհակառակը, եթէ կովը կերակրւումէ կանաչ կերով,

\* Հարաւող յաղը սերի տաքութիւնը պէտք է լինի մօտաւորապէս  $11-120$ , բրուած սերինը՝  $15-160$ , իսկ բրուած կարինը՝  $17-180$  Ռ.:

կոպտնով և այլն, պէտք է հարել ցած աստիճանն ըարելիառ սութեան մէջ, որովհետև ոտլորաբար այդպիսի կերից թոյլ կարագ է ստացւում: Ամեն ժամանակ սերի տաքութիւնն այնչափ պէտք է լինի, որ 40—45 քաղէում կարագը հարուի: որքան ըաշճը լինի սերի տաքութեան աստիճանը, այնքան աւելի շուտ կարագ կատացուի և ընդհակառակը, որքան ցած լինի, այնքան աւելի դժուար և երկար ժամանակ կհարուի: Զափազանց բարձր տաքութեան մէջ հարած կարագը լինում է թոյլ, կակուզ, ճրագուակալած, իւր մէջ մէծ քանակութեամբ ջուր և պանրածին է պարունակում, դժուարութեամբ է քամւում, կորցնում է իւր անուշահոտութիւնը, հետեւապէս և կարճ ժամանակ կարող է գիմանալ: ընդհակառակը, երբ սերը ցած աստիճանի տաքութիւն է ունենում, հարած ժամանակ ճարպային գնտակիլիները դժուարութեամբ են հաւաքում, միանում և կարագ կազմում: ստացուած կարագն էլ լինում է պինդ, քամւում է դժուարութեամբ, ամանի մէջ միակերպ դոյն չէ ունենում (դոյնզգոյն, մարմարագոյն), սակայն համեղ է լինում:

3. Խեցու մէջ եղած սերի բանակուրինը. Սա ևս աղջեցութիւն է ունենում ոչ միայն շատ հարելու, այլ և սերից կանոնաւոր չափով կարագ ստանալու վրայ: Խըրաքանչիւր խնոցու մէջ պէտք է մի որոշ չափով կաթ կամ սեր լցնել, որից աւելի կամ պակաս եղած գէպքում անկանոն կերպով տեղի կունենայ կարագի հատիկների երեան դալը, ուշ կհարուի և կարագը կատարելապէս չի դարս գայ սերի միջից: Շատ անգամ խնոցի հարողները գանդատւում են, թէ կարագը ուշ է գոյանում: սորա պատճառը խնոցու մէջ սեր կամ կաթ շատ լցնելն է, որի պատճառով էլ սերը զօրեղ կերպով չէ հարւում և չէ զարնուում: Զափազանց պակաս սերն ևս խիստ մէծ խնոցու մէջ շատ զօրեղ զարկեր է ունենում, կարագը շատ շուտ է կազմուում, որի պատճառով և յաճախ գնտակիլիների երեան դալը խանդարւում է և քիչ կարագ ստացւում:

4. Սերի բանձրուրինը. Կարագ ստանալու համար սերի թանձրութիւնն ևս նշանակութիւն ունի: Պահանջուած թանձրութեամբ սեր կունենանք միայն այն ժամանակ, երբ նաևսար կլինի այն կաթի ամեսողջ ծաւալի  $\frac{1}{3}—\frac{1}{6}$  ( $16—20\%$ ) մասին, որից քաշուած է կամ զատուած: Խիստ թանձր սերը տալիս է աւելի շատ կարագ, բայց չկարողանալով աղատ շարժուել խնոցու մէջ, շփւում է նորա պատերի և ներքին մասերի՝ թևերի, զանդակիլիների հետ, այդ պատճառով էլ փոխում և դորցնում է իւր համը և պնդութիւնը: Խիստ ջրալի սերն աւելի կորցնում է իւր համը և պնդութիւնը:

շատ աշխատութեան պատճառ է դառնում։ այդպիսի սեր կարելի է գործ ածել աշնանը, եթիւ սովորաբար քիչ կաթ, հետեւապէս և քիչ սեր է լինում։

5. Կարազի հատիկների մեծութիւնը, որով որոշում է կարագի պատրաստի լինելը. կարագ ստացում է ճարպային գնտակիկների իրար հետ միանալուց և եթէ հարը կանոնաւոր և համաչափ է տեղի ունեցել, այն ժամանակ կարագի հատիկները պէտք է լինեն կատարելապէս գնտածե, եթիւ կարագը քաժանուում է սերից, կազմում է կատարելապէս գնտածե մանրիկ կորեկի մեծութեան հատիկներ։ Հարելու այդ առոտիճանը ընական է համարւում և եթիւ կարագի հատիկը հատնում է այդ մեծութեան, իսկոյն հարկաւոր է խնոցին դադարեցնել հարելուց։ Եթէ հարելը շարունակուի, հատիկներն իրար հետ միանալով աւելի կխոշորանան և իրենց մեծութեան պատճառով անկարող կլինեն պահպանել իրենց ձեւը։ Արանք կսեղմուեն և նախ ծուածե, ապա երկարաւուն և վերջապէս բռլորուին անկանոն ձեւ կոտանան ու կկազմեն մեծ կտորներ։ Այսպիսի կարագը խանդարուած է համարւում։ Նա ճրագուակալում է, պարունակում է իւր մէջ մեծ քանակութեամբ ջուր, դժուարութեամբ է քամուում, անհամ է լինում, պինդ չէ և շուկայում լաւ գին չէ ունենում։ Որպէս զի կարագը չափազանց շատ չհարուի և չլինասուի, նախազդուշանալու համար, նախքան հարելը, պէտք է շուտ շուտ բաց անել խնոցին և հետեւել հատիկների կազմակերպուելուն, սառը ջուր կամ օտառուց լցնելով պէտք է արգելել հատիկները միմեանց կալելուց։ Դեռ հատիկները վերեւում յիշուած մեծութեան չհասած, եթէ կարագը խնոցուց դուրս է բերւում, այդպիսի կարագը համարւում է կիսակատար հարուած։ Եթիւ կարագի հարը տեղը չի լինում (հարը պակաս է լինում), թէպէս և պահպանում է իւր թարմութիւնը, անուշահոտութիւնը և լաւ համը, բայց իւր մէջ շատ թան է պահում, որի պատճառով և կարագի մէջ պանրածինի քանակութիւնը շատանուում է, նա թոյլ է լինում և, եթէ երկար պահուի, կկծուի։

6. Խնոցու շարժումների արագութիւնը. Կարագ հարելիո իւրաքանչիւր տեսակ խնոցու շարժումները տարբեր արագութիւն են ունենում։ Եթէ 1.5ֆէլգի ձևի խնոցիները չափազանց արագ պատճենք (օրինակ մի բուպ. 100 պառայտ), նրանց մէջ եղած սերը կենտրոնախոյս զօրութեան պատճառով կկպչի պատերին և առանց վանդակի վրայ ընկնելու, խնոցու տակառիկի հետ միասին կուկնեն պառյաներ անել, որով և հարը տեղի

չեւունենայ: Չափազանց դանդաղ պատելիս խնոցու զարկերը թոյլ կլինեն և հարը կրկին ուշանում է: Ահա այս պատճառով հարկաւոր է ամեն մի տեղակ խնոցու համար մի որոշ չափ աչքի առաջ ունենալ: Հարելու ամբողջ ժամանակուայ ընթացքում խնոցու պատոյտները պէտք է լինեն միակերպ և ունենան միանման արագութիւն մինչև այն ժամանակ, երբ կաստիկ հատիկները կազմուած կլինեն, որից յետոյ պատոյտները պէտք է քիչ գանգաղացնել, որպէս զի կազմուած կարտքը խնոցու ներքին մասերին չափազանց զօրեղ զարկուելուց չափականութիւն, չնայակուակալուի: Քաղցր սերը քիչ աւելի դժուարութեամբ է հարում, քան թէ թթուած սերը, այս պատճառով առաջին տեսակ սերը հարելիս քիչ աւելի արագ պէտք է կատարել պատոյտները, քան թէ թթուած սերը: Նոյնը պէտք է ի նկատի ունենալ նաև ջրալի և թանձը սերերի վերաբերմամբ, առաջին աեսակը հարելիս խնոցին քիչ աւելի արագ պէտք է շարժել, քան թէ թանձը սերը հարելիս: Լաւ խնոցիների մէջ կարագ հարելը վերջանում է 20—60 բոպէում:

Լաւ խնոցու յատկութիւնները. Խնչպէս կարագ ստանալու, նոյնպէս և նորա յատկութեան համար խիստ մեծ նշանակութիւն ունի այն դործիքը, որով կարագ է պատրաստուած: Այդ գործիքը կոչուած է խնոցի, ձնում կամ ծիփոց: Լաւ կազմուած խնոցին պէտք է ունենայ հետեւեալ յատկութիւնները\*

1) Պէտք է պարզ և ամուր կազմութիւն և հեշտ գործածուելու յարմարութիւն ունենայ, որպէս զի կարելի լինի հեշտութեամբ մաքրել, մեջից վատ հատելը հեռացնել:

2) Մեծութեան կողմից ևս խնոցին յարմար պէտք է լինի, որ հեշտութեամբ կարելի լինի պատել և հարելու համար մեծ ոյժ չպահանջուի: Միշտ պէտք է առաւելութիւն տալ այն խնոցիներին, որոնք պակաս գործող ոյժ են պահանջում, որի համար և անհրաժեշտ է, որպէս զի խնոցու առանձին մասերը լաւ պատրաստուած և հարթուած լինին, իսկ պատռուղ խնոցիների երկու մասերը հաւատարակշռութիւն ունենան, որպէս զի մի կողմը միւսին չծդէ:

3) Խնոցին լուսամուռ և տռհասարակ մաքրելու բոլոր յարմարութիւններն էլ պէտք է ունենայ, այս նպատակով անցըք կամ դռնակը որքան լույն լինի, այնքան լաւ է: Մէջը պէտք է քիչ միջնորմներ, աւելորդութիւններ լինեն, որպէս զի անկիւններ և ձեւների ու խոզանակների համար անմատչելի աեղեք չլինեն: Նեղ անցըքերով խնոցիները վատ են մաքրուած, քամւում, որի պատճառով էլ ամենափոքը անհոգութիւնից բորբոսնում,

թթու հոտ են ունենում, որը նոյն իսկ զգալի է լինում կարագի վրայ:

4) Խնոցին պէտք է այնպէս յարմարեցրած լինի, որ կարագը նքանում կարելի լինի լուանալ։ այդ նպատակին համեմու համար խնոցին չպէտք է յատակի վրայ դնովի լինի, այլ կախում կամ այլ կերպ յարմարեցրած, որպէս զի հնարաւոր լինի դուրս թափել թանը և տեղը ուառը ջուր լցնել։

5) Խնոցու մէջ մետաղ չպէտք է լինի, մանաւանդ չկայելած, որովհետեւ մետաղը վատ համ է տալիս կարագին, նողաւում է նաև փայտի փշանալուն, որի պատճառով և խնոցին շատ շուտով փշանում է։ Ահա այս պատճառով խնոցի դնելիս պէտք է ու շադրութիւն դարձնել, որ նորա տարբեր մասերն իրար միացնող մեխերի ծայրերը խնոցու մէջ դուրս եկած չլինեն։ Բոլոր մեխերն ու պտուտակները պէտք է լաւ կլայելած լինեն։ Այն խնոցիները, որոնց մէջ երկաթէ առանցք կայ անցկացրած, անյարմար պէտք է համարել գործածութեան։

6) Խնոցու տախտակները պէտք է շատ լաւ հարթած և երար պինդ ուղղմուած լինեն, որպէս զի նըանց միջն, նմանապէս և ըոլոր մնացած մասերում փոսիկներ, անցքեր, ճեղքուածքներ մնացած չլինին, որտեղ կարող են մնալ թանի մնացորդները և յետոյ թթուել կամ նեխուել։ Շատ ոստեր ունեցող փայտը անցալմար է համարւում խնոցի շինելու համար։

7) Խնոցի շինելու համար ամենայաջմարաւոր փայտ համարւում է կաղնին, թեղօշը, ամերիկական հացի ծառը (ամերիկանի ածոյն), շատ քիչ գործածական է թխտենին (березա), բոլորովին անյարմար են ճանաչուած կակուղ փայտերը, որոնք ջրի ազգեցութեան տակ շուտով սկսում են փշանալ։

8) Խնոցին չպէտք է ոչ չափազանց շատ դանդաղ և ոչ ել շատ արագ կարագ հարէ։ շուտ-շուտ հարած ժամանակը գժուտը կլինի իմանալ կարագի հասակների հառունանալու ըստ-պէն, որի պատճառով և շատ անդամ այդպիսի խնոցիների մէջ կարագը չափից աւելի է զարկւում և ճրագուտակալում։ Եթէ խնոցին շատ դանդաղ է հարւում, այդ դէմքը ում, բացի իդուր ժամանակ և աշխատանք կոսցնելուց, կարող է քիչ կարագ ստացուել։ Այս հանդամանքն աչքի տռաջ ունենալով, խնոցու ներքին մասերը, ինչպէս օրինակ թերերը, վանդակները և այլն, չպէտք է շատ մեծ և խիտ լինեն և ընդհակառակը։

9) Խնոցու անցքը կամ գոնակը հնար եղածին չափ պէտք է լայն լինի, որպէս զի կարելի լինի աղատ կերպով թիակի օգ-

ՆՈՒԹԵԱՄԲ կարտգը դուքս հանել և միւս աշխատութիւնները հէնց ուղղակի միջում կատարել:

10) Խնոցին այնպիսի կազմութիւն պէտք է ունենայ, որ ամեն տեսակ սերից և կաթից կարելի լինի ամբողջ կարագը զատել:

11) Վերջապէս խնոցին պէտք է լինի էֆան, հետեւապէս և փայտից շինուած, որովհետեւ մետաղից պատրաստածը թանգ է լինում: Թէպէտ գժուար թէ լինի մի այնպիսի խնոցի, որ վերոյիշեալ բոլոր պահանջներին համապատասխան լինի, այսուամենայնիւ շատ կան ոքոշ չափով յարմարաւոր խնոցիներ:

**Խնոցիների տեսակները.** Հոլեսէյնի խնոցի. Խստ տարածուած պարզ կազմութիւն ունեցող և մեր գիւղացիների համար յարմարաւոր խնոցիներից է համարւում «Հօլշտէյնի» խնոցին: Սա ձեռքով շարժելու խնոցիներից ամենալաւագոյնն է և համարեա ամենայն տեղ գործ է ածւում միայն այս ձեի խնոցիների ձիով կամ շողեմեքենայով շարժուող տեսակները: Հօլշտէյնի խնոցին համարեա միակն է, որ կարող է բաւականութիւն տալ վերոյիշեալ բոլոր պահանջներին: Այս խնոցին բաղկացած է մի բաց տակառից, որ միջնորմներ և ծակ-ծակ թեեր չէ ունենում: Կարելի է շատ լաւ լուանալ տակառը, վեր առնել գործերի վրայից և գուրս գնել մաքուր օդի մէջ, որ հոտը քաշուի: Խնոցու հարող մասը բաղկացած է մի հասարակ շրջանակից, որ նոյնպէս հեշտութեամբ կարելի է գուրս բերել լուանալու համար: Լայն բացուածք կամ դըռնակներ ունենալով՝ այս խնոցին բոլոր գործողութիւնները կատարելու ամեն տեսակ յարմարութիւններ ունի: Կափարիչի միջով անցկացրած ջերմաչափը հսարաւորութիւն է տալիս գործի ամբողջ ընթացքում հետեւ սերի բարեխառնութեան աստիճաննին: Եթէ տակառը բարձրացած է, նորա մէջ յարմար կլինի կարագ լուանակ, դուրս թափել թանը և այլն: Այս տեսակ խնոցիներ պատրաստում են թէ արտասահմանում, թէ Ռուսաստանում և թէ Ֆինլանդիայում. վերջիններն աւելի էֆան են: Ֆինլանդական խնոցիներից թէ 1-ը, որի մէջ կարագ հարելու համար մի անգամից կարելի է լցնել  $15/4$  վեցօ սեր, արժէ 30 ռ., թէ 2, որ  $2^{1/2}$  վեցօ սերի համար է՝ 45 ռուբ... արժէ 30 ռ., թէ 2, որ  $2^{1/2}$  վեցօ սերի համար է՝ 50 ռ., թէ 5., որ թէ 4., որ 4 վեցօ սեր հարելու համար է՝ 52 ռ., թէ 6., որ  $6^{1/2}$  վեցօ սերի համար է՝  $52^{1/2}$  ռ., որ 9 վեցօ սերի համար է՝ 100 ռ.: 2իամար է՝ 75 ռ., թէ 7., որ 9 վեցօ սերի համար է՝ 100 ռ.:

շարժ և շոգեշարժ խնոցիներն ևս տարբեր մեջութեամբ և  
տարբեր գներով են լինում:

Հօլշտէյնի ձեւի խնոցիների մէջ մինչև  $\frac{2}{3}$  մասը կարելի է  
սեր լցնել. աւելի մեծ քանակութեամբ անհնարին է լցնել.  
սերը կակոէ կափարեցից դուրս ցայտել և կարագը կատարե-  
լապէս չի արտադրւում։ Քիչ քանակութեամբ սեր եղած  
դէպքում ևս խնոցին լաւ չի հարւում։ այս պատճառով եր-  
բէք չպէտք է խնոցու  $\frac{2}{3}$  մասից պակաս սեր լցնել մէջը։ Գլա-  
նիւի պայցտների թիւը փոփոխւում է՝ նայած խնոցու մեծու-  
թեանը և հարւուղ նիւթին։ Երբ մեծ խնոցիներով քաղցր սեր է  
հարւում, պայցտների թիւը 120—150 պէտք է լինի, իսկ  
թթուած սերը հարելիս պայցտների թիւը 20-ով պակաս:  
Զեռքի խնոցիների պատելու արագութիւնը պէտք է 20—30  
պայցտով աւելի լինի։

(Շարունակելիի).

9-1.